

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԵՐՏԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆՈՒՄ

ՀՄՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

1. Ուրարտական կրոնի և ուրարտական դիցարանի հետ կապված հարցերը ուշադրություն են գրավել ուրարտագիտության առաջին իսկ քայլերից սկսած: Սովետական ուրարտագետներից այդ հարցերին առանձնահատուկ ուշադրություն են նվիրել Գ. Ա. Ղափանցյանը, Բ. Բ. Պիոտրովսկին, Գ. Ա. Մելիքիշվիլին, Ի. Մ. Դյակոնովը, Ս. Գ. Հմայակյանը և ուրիշները¹:

Ուրարտական կրոնի և դիցարանի մասին տեղեկություններ են տրվում նաև Հայաստանի և հայ կրոնի պատմությանը նվիրված աշխատություններում, ուրոնց հանգամանալից թվարկումը մեր նպատակից դուրս է²:

Պատմալեզվաբանական առումով ուրարտական դիցարանի ուսումնասիրության արդյունքները կարելի է ամփոփել մի քանի կետի մեջ:

1.1. Եթե հաշվի չառնենք ուրարտական աստվածությունների լեզվական-արտահայտության նկարագրական և գաղափարագրական ձևերը, այլև ուրարտական գլխավոր աստված Խալդիի տարբեր անձնավորումները (հիպոստասիսները), ապա կարելի է ասել, որ ուրարտական արձանագրություններում, հատկապես Մհերի դռան արձանագրության մեջ, հանդիպում են դիցական շուրջ հինգ ու կես տասնյակ հատուկ անուններ: Դրանք ստորև կբերվեն այս-բենական կարգով, ընդ որում՝ ա) աստվածուհիների անունները կօժտվեն իգ. (= իգական) կրճատ նշումով՝ փակագծերի մեջ. բ) միևնույն անունների գրային (բարբառային) տարբերակները կտրվեն նույն թվահամարի տակ՝ առանձնացված թեք գծով (/). գ) պակասող կամ անընթեռնելի մասերը կանվանվեն միջակ փակագծերի մեջ:

Հմայ. հատկապես Գ. Ղափանցյան. Ուրարտի պատմությունը. Երևան, 1940, էջ 41—51, Գ. Ա. Капанцян. Об урартском божестве Adarutha.—Известия АН АрмССР, 1944, № 5—7, с. 25—32; он же. Об урартском божестве Шебиту.—Известия АН АрмССР, 1946, № 11—12, с. 9—18; Б. Б. Пиотровский. История и культура Урарту. Ереван, 1946, с. 271—284; он же. Ванское царство. М., 1959, с. 220—231; Գ. Ա. Меликпшвили. К интерпретации урартской надписи Мхер-капуси.—Сообщения АН ГрузССР, 14, 1953, с. 175; он же. Наири—Урарту. Тбилиси, 1954, с. 365—375; он же. Урартские клинообразные надписи. М., 1960; он же. К чтению одного места в летописи урартского царя Аргишти I.—Переднеазиатский сборник, М., 1979, с. 174; Լ. М. Diakonoff. Hurrisch und Urartäisch. München, 1971, 63—65; Լ. М. Дьяконов. К вопросу о символе Халди.—Древний Восток. 3. Ереван, 1983, с. 190—194; Ս. Հմայակյան. Ուրարտական դիցարանի աստվածությունների մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 153—164; նույնի՝ Ուրարտական դիցարանի «սրբություններ» մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 205—210; նույնի՝ Ուրարտական Խալդի և Արուգան աստվածությունների մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 2, էջ 127—139 և այլն:

2 Սրանցից նշենք հատկապես երկու աշխատություն՝ Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 224—231 (թարգմանություն 1946 թ. ֆրանս. հրատարակությունից): Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Երևան, 1971, էջ 407—413 (հատվածի հեղինակ՝ Բ. Բ. Պիոտրովսկի):

- | | |
|--|---|
| 1. Adaruta | 28. Ip̄hari (իդ.) |
| 2. Adia (իդ.) | 29. Irmušini |
| 3. Aḷa (իդ.) | 30. Nalaini |
| 4. Ainaue (իդ.) (հասարակ անու ³) | 31. Qilibani |
| 5. Alraini | 32. Quera |
| 6. Alaptušini | 33. [—]raue |
| 7. Anapša | 34. Sardi (իդ.) |
| 8. Ar'a (իդ.) | 35. Silla (իդ.) |
| 9. Araza | 36. Šinuḷardi (իդ.) |
| 10. Ardi (իդ.) | 37. Šebitu |
| 11. Arni | 38. Šelardi |
| 12. Arsimela | 39. Ši[—]da (նաև Ši[—]da-a-kai
ձևով) |
| 13. Aršibedini | 40. Šiniri |
| 14. Arṭu'ar(a)sı | 41. Šiulni |
| 15. Aruba(i)ni/Uarubani (իդ.) | 42. Šuba |
| 16. Atbini | 43. Talapura |
| 17. Aṭi (իդ.) | 44. Tarnaini |
| 18. Barša (իդ.) | 45. Teišeba |
| 19. Di(e)dualni(e) | 46. Turani |
| 20. Ella'a | 47. Tušpuea |
| 21. Elip(u)ri (ELIB-uri՝ ըստ Դլա-
կոնովի) | 48. Ūa |
| 22. Erlina | 49. Ūia (իդ.) |
| 23. Haldi/Aldi | 50. Unina |
| 24. Hara | 51. Ura |
| 25. Huba | 52. Zi(u)quni |
| 26. Huṭulni | 53. Zuzumaru |
| 27. Inuanaue (իդ.) (հասարակ ա-
նու ³) | |

Սրանց պիտի ավելացնել Bagmaštu (Bagbartu) աստվածուհու անունը, որ հիշատակված է Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի արձանագրության մեջ (որպես նալդի աստծու կնոջ անուն)³ և, ըստ Գ. Մելիքիշվիլու, Արգիշտի I-ի խորխորյան տարեգրության մեջ հանդիպող aštluzi նշանախումբը՝ աստծու կամ կուռքի իմաստով⁴:

1.2. Եղած տվյալների համադրության հիման վրա հնարավոր է գաղափար կազմել ուրարտական դիցարանի կազմի և առանձնահատկությունների մասին: Ամենից առաջ՝ այդ դիցարանում առկա է որոշակի հիերարխիա, որ ցայտուն արտահայտություն է գտել Մհերի դրան արձանագրության մեջ. այստեղ ըստ աստվածների դիրքի և կարևորության որոշվում է նրանց զոհաբերվող կենդանիների տեսակն ու քանակը: Դիցարանի գլուխն է կանգնած գլխավոր աստված Haldi-ն, որ յուրատեսակ եռաստվածություն է կազմում Teišeba-ի և Šiulni-ի հետ: Երկրորդ՝ գերագույն եռաստվածությունը որպես երկնային

³ Հստ Գ. Ա. Մելիքիշվիլու (Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи, с. 421)՝ Bagmaštu-ն Uarubani-ի մուսասիրյան իրանական անունն է, ըստ Բ. Բ. Պյոտրովսկու (Б. Б. Пятровский. Ванское царство, с. 223)՝ Մուսասիրի Bagbartu-ն (Bagmaštu) նաև տեղական բնույթ է ունեցել և հետո փոխարինել Uarubani-ին:

⁴ Г. А. Меликишвили. К чтению одного места..., с. 174.

աստվածությունների (Խալդի՝ երկնքի, Թեյշեբա՝ փոթորկի և անձրևի, Շիվի-նի՝ արևի) ամբողջություն հակադրվում է երկրային աստվածություններին, որոնք տարբերակված են ըստ գործառնությունների և, հավանաբար, ըստ պաշտոնի վայրերի՝ որպես աարբեր ցեղերի հովանավորներ։ Երրորդ ուրարտական դիցաբանը, ինչպես նշվել է ցանկի կապակցությամբ, ունի և՛ արական, և՛ իգական անդամներ. դեռևս «Ուրարտուի պատմության» մեջ (1940 թ.) Գ. Ղափանցյանը կարծիք է հայտնել, որ Մհերի դուստր արձանագրության մեջ թվարկված «վերջին աստվածները—Իպխարի (թերևս՝ Իշխարի), Բարծիա, Սիլիա, Ուիա, Աինի և թերևս Ար՝ աստվածները եղել են իգական»⁵. հետագայում Գ. Ա. Մելիքիշվիլին այս բանը պնդում է Ղափանցյանից անկախ⁶ նշելով 16 աստվածուհի, որոնք առանձնացված են մեր ցանկում «իգական» նշումով։ Չորրորդ՝ եթե դիցանունները, ինչպես կտեսնենք, երբեմն կազմված են այլ (օրինակ՝ տեղանիշ) հատուկ անուններից, ապա, մյուս կողմից առկա են դիցանունների հիման վրա կազմված (թեոֆորային) անձնանուններ (հմմտ. Haldi[—] արական անձնանունը՝ Haldi-ից և Sarduri-ն՝ Sardi-ից) և տեղանուններ (հմմտ. Queralnili և Queraltaše տեղանունները Quera-ից)։

1.3. Ուրարտական դիցանունների հիմնական մասը, բնականաբար, տեղական՝ ուրարտական ծագում ունի։ Մասնավորապես բուն ուրարտական են այն դիցանունները, որոնք ա) առաջնակարգ դիրք են գրավում ուրարտական դիցաբանում, բ) զուգահեռներ ունեն ուրարտերենին մերձավոր խոտերենով խոսողների՝ խուրիների դիցանունների մեջ և գ) ստուգաբանվում են ուրարտերենի տվյալներով։ Դրանցից կարելի է հիշել ամենից առաջ ուրարտական եռաստվածության անդամներին, որոնցից երկուսը զուգահեռ ունեն խուրական դիցաբանում՝ Haldi (Aldi), Teišeba (հմմտ. խուր. Teššub), Šuini (հմմտ. խուր. Šimigi)։ Մնացած աստվածություններից մասնավորապես նշենք հետևյալներին՝ Huba (հմմտ. խուր. Hebat), Huṣuini (հմմտ. ուրարտ. huṣu-tuḥi), Iphari (հմմտ. ուրարտ. ipḥu- շարդել, փշրել) և Iphari (շ), Quera (սրա անունից են կազմված Queralnili, Queraltaše տեղանունները. թերևս անցել է վրացական հեթանոսական գիցաբանին՝ պտղաբերության աստված Քվիրիալի անվան տակ), Silia (հմմտ. ուրարտ. sila զոռատր?), Tušpuea (հմմտ. Ուրարտուի մայրաքաղաքի անունը՝ Tušpa) և այլն։

1.4. Ուրարտական դիցաբանի վրա, ամենայն հավանականությամբ, ազդեցություն են թողել սեմական և փոքրասիական դիցաբանները։ Գ. Ղափանցյանը բաբելական ծագում է վերագրում Aja (հմմտ. բաբել. Aja—անտառների մայր աստվածուհի)⁸, Ura (հմմտ. բաբել. Uraš—գարնան և

⁵ Գ. Ղափանցյան. Ուրարտուի պատմությունը, էջ 47։

⁶ Г. А. Меликишвили. К интерпретации урартской надписи Мхер-капуси, с. 175.

⁷ Մեր «Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков» գրքում (Ереван, 1967, с. 35) մենք սրանք հեռավոր ցեղակցությամբ կապել ենք հ.-ե. *suen- «արև» հիմքին (հմմտ. գոթ. sunno «արև»)։

⁸ Եթե հիշտ է Գ. Ղափանցյանը, ապա կապ չկա ուրարտ. Aia-ի ու հուր. aia-ի [«(երկրի) տատ, մեծ մայր»] միջև՝ մի կողմից և ուրարտ. Aia-ի ու հայաստի անվան միջև՝ մյուս կողմից։ Ասուրական արձանագրություններում հիշատակված ուրարտական Aialā բնակավայրի անունը (հմմտ. К. К. Riemschneider. Handbuch des Akkadischen. Leipzig, 1973, S. 278. հմմտ. Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 16) կարող է ածանցված լինել Aia-ից։

կովի աստված), Unina [հմմտ. բաբել. o(a)nn(es)] և ընդհանրապես սեմական ծագում Adaruta (հմմտ. սաբեական Athar, արամեա-արարական At(t)ar-, որոնց համապատասխանում են քանաան. Astoret-ը և փյունիկ. Astarta-ն) և Šebitu (հմմտ. ասուր. Sibitti «լոթնաստված») աստվածներին: Միաժամանակ նա մատնացույց է անում ուրարտ. Atbinu և խեթ. Halebini-, ուրարտ. Anapša և խեթ. Napšara դիցանունների նմանությունը: Հենվելով Ա. Սելսի վրա, որ կապել է ուրարտ. Sarūi-ն լիդ. Σαρδεις-ի («տարի» և «արեի աստված») հետ, Գ. Ղափանցյանը մատնանշել է նաև սրանց նմանությունը ավեստ. sarəda- «տարի», օս. sard «ամառ», պրսկ. sāl «տարի» բառերի հետ⁹:

1.5. Հետադոտողները բացահայտել են ուրարտական դիցանունների կազմության մի շարք առանձնահատկություններ:

1.5.1. Ի. Մ. Դյակոնովը նկատել է, որ ուրարտական դիցանունների մեծ բաժական հաճախադեպ է ածանցական -a (ըստ Դյակոնովի՝ երկար -ā) տարրը. այն հաճախադեպ է աստվածուհիների անունների մեջ՝ Adia, Aja. Ara և այլն և հանդիպում է զգալի թվով աստվածների անուններում՝ Adaruta, Arsimela, Anapša և այլն¹⁰:

1.5.2. Գ. Ղափանցյանը մատնանշել է զգալի թվով ուրարտ. -ini հատկացական ածանցով կազմությունների առկայությունը՝ Alaptušini, 'Aru-balni (Uarubani), Diduaini, Irinusini, Huṭuini, Nalaini և այլն. ճիշտ է, սրա հիման վրա Ղափանցյանն արել է այն եզրակացությունը, որ այդ դիցանունները լեզական թե տեղական ուրարտական լեզվով են ձևավորված¹¹, բայց կարելի է նշել, որ ուրարտական ածանցի առկայությունը չի նշանակում հիմքի պարտադիր ուրարտական ծագում:

1.5.3. Մի շարք դիցանուններ ակնհայտորեն բարդ կազմություններ են. այսպես, ամենայն հավանականությամբ որպես աստվածուհու անուն (Ardi) առանձին հանդիպող ardi տարրով են կազմված Seiardi (լուսնաստված) և Šinuṣardi (աստվածուհի) անունները:

1.5.4. Ainaue-ն և Inuanaue-ն հավանաբար պարունակում են -n- հոդը և հոգնակի սեռական-տրականի -aue վերջավորությունը և կարող են լինել ցեղանուններից կամ տեղանուններից կազմված ոչ բուն դիցանուններ՝ «այերի» (իմա՝ հայերի) (աստծուն), «ինուանների» (աստծուն)՝ նշանակությամբ¹²:

1.5.5. Ինչպես նշվել է, Tušpuea աստվածուհու անունը ակնհայտորեն, ածանցված է Tušpa (=հայ. Տոսպ) տեղանունից՝ արխաիկ -ea ածանցով: Sarduri անձնանունը՝ Sardī աստվածուհու անունից՝ ախաիկ -uri ածանցով:

2.1. Եթե ուրարտական դիցաբանի մի շարք անդամներ ընդհանուր բնույթ ունեն, իսկ մյուսները տեղական պաշտամունքի առարկա են եղել, և եթե հայերը զգալի դեր են խաղացել ուրարտական պետության կազմում, ապա նրանց պաշտած աստվածներն ու աստվածուհիները գոնե որոշ մասով պիտի արտացոլվեն ուրարտական արձանագրություններում: Մեր աշխատություններում

⁹ Գ. Ղափանցյան. Ուրարտուի պատմությունը, էջ 45:

¹⁰ I. M. Diakonoff. Hurrisch un Urartisch, S. 62—63.

¹¹ Գ. Ղափանցյան. Ուրարտուի պատմությունը, էջ 46:

¹² Ըստ Ֆ. Վ. Կոնիգի (F. W. König. Handbuch der haldischen Inschriften. Graz, 1955—1957, S. 188) վերջինս տրաքանի ձև է (Inuanaue) և նշանակում է «ինուա:ի» աստվածներին: Եթե ai-երի անվան տակ նկատի են առնվում հայերը, ապա այդի աստծու անվան տակ կարող էր նկատի առնվել Հայկը:

մենք առիթ ենք ունեցել խոսելու այն մասին, որ ոչ միայն հայերենը պետք է փոխառություններ կատարած լինե՞ր ուրարտերենից, ինչպես երկար ժամանակ միակողմանիորեն նշվել է ուրարտագիտական աշխատություններում, այլև ուրարտերենը՝ հայերենից։ Մասնակի օրինակների հիման վրա 1963 թ. մեր կողմից առաջ քաշված այս դրույթը¹³ վերջին ժամանակներս հաստատվեց մի շարք նոր փաստերով¹⁴։

2.2. Մեթոդաբանական ի՞նչ սկզբունքներով պետք է առաջնորդվել ուրարտական այս կամ այն բառի հայկական ծագումն ապացուցելու համար։ Այդպիսի հրեք հիմնական սկզբունք կարելի է առաջ քաշել. 1) ուրարտերեն բառի հնչյունական կերպարանքը պիտի ճշտորեն համապատասխանի պահպանված հայերեն բառի՝ ուրարտերենի ժամանակի համար վերականգնվող հնչյունական կերպարանքին, այսինքն՝ լիովին բխի հայերենի հնչյունական օրենքներից և օղակ լինի վերականգնվող հնդեվրոպական նախաձևի և հայերենի բառաձևի միջև. 2) հայերեն բառի համար վերականգնվող իմաստը պետք է համապատասխանի ուրարտերեն բառի կոնտեքստային իմաստին (իմաստներին) կամ նախնական լինի ուրարտական համապատասխան բառի իմաստի նկատմամբ (ուրարտական բառի իմաստը պետք է ածանցելի լինի նրանից և ոչ հակառակը). 3) այն դեպքում, երբ ուրարտերենի պահպանած հայերեն բառը հայերենի հայտնի վիճակում չի պահպանվել, այն պետք է հայերենի հնչյունական օրենքներով բխի հնդեվրոպական համապատասխան նախաձևից և հավաստիորեն վերականգնվի սրանով։

Ինչպես հայտնի է, մեր մի շարք աշխատություններում փորձ է արված ցույց տալու խուռա-ուրարտական լեզվախմբի նոստրատիկ բնույթը¹⁵։ Այս դեպքում, բնականաբար, պետք է լինեն նոստրատիկ ընդհանրություններ հատկացվող հնդեվրոպական և խուռա-ուրարտական լեզուների այնպիսի ընդհանրություններ, որոնք համապատասխան արտացոլում գտնեն հայերենում։ Ինչպե՞ս պետք է տարբերակվեն ուրարտերենի՝ հայերենից փոխառած բառերը նոստրատիկ ընդհանրությունից նրա ժառանգած և հայերենում բնիկ հնդեվրոպական զուգահեռներ ունեցող բառերից։ Հասկանալի է, որ այս բանը պետք է կատարվի հնչյունական համապատասխան տարբերությունների (հնչյունական տարբեր օրենքների առկայության փաստերի) հաշվառմամբ։ Կարող են լինել, իհարկե, երկու հնարավորությունների համընկումներ (մանավանդ, որ ուրարտերենի բուն արտասանությունը մենք կատարելապես չգիտենք), բայց դրանց թիվը մեծ չպետք է լինի¹⁶։

¹³ Г. Б. Джаукян. Урартский и индоевропейские языки. Ереван. 1963, с. 133.

¹⁴ Г. Б. Джаукян. Влияние урартского языка на армянский.—Культурное наследие Востока, Л., 1985, с. 369.

¹⁵ Г. Б. Джаукян. Урартский и индоевропейские языки; его же. Новые индоевропейско-урартские параллели.—Известия АН АрмССР, 1965, 3, с. 45—55; его же. Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков. Ереван. 1967.

¹⁶ Այս կապակցությամբ չենք կարող մի քանի խոսք չասել այն թյուրատեսության մասին, որ հանդես են բերում հին շրջանի առանձին հայ մասնագետներ մեր վարկածի նկատմամբ։ Այդ վարկածը շատ բանով հասկանալի է դարձնում հայերենի և խուռերենի ու ուրարտերենի այդ ընդհանրությունների բնույթը, որոնք առանց որոշակի տարբերակման բերվում են ուրարտագետների աշխատություններում։ Մինչդեռ նրանք գերադասում են հենվել այդ տվյալների, կամ հայերենը լավ չիմացող օտարազգի հետազոտողների վրա, մի հանգամանք, որ դուռ է բացում դիլետանտական «հայտնագործումներին» համար։ Եթե որոշ դեպքերում էլ մենք չենք պատասխանում մասնակի դիտողություններին, ապա չի նշանակում, թե դրանք ճիշտ են. մենք պարզապես մտածում ենք, որ չարժե ժամանակ կորցնել դիտությունը նոր բան չտվող վեճերի և արդեն հայտնի բաների պարզաբանումների վրա՝ հարցը թողնելով ապագայի անկաշառ դատաստանին։ Այսուհանդերձ հարկ է լինում երբեմն-երբեմն անդրադառնալ որոշ անհարկի դիտողություններին՝ հարցը պարզաբանելու նպատակով։ Այդպիսի մի առիթ մեզ ներկայանում է այժմ Գ. Տի-

2.3. Մինչև այժմ ուրարտական դիցանուններին մենք հատուկ ուշադրություն չենք դարձրել՝ սահմանափակվելով միայն մի երկու դիցանվան ստուգաբանության փորձով (Šigini, Šelardi): Առավել ես մենք առիթ չենք ունեցել անդրադառնալու ուրարտական արձանագրությունների մեջ հիշատակ-

րացանի «Հայերի ոչ հնդեվրոպական նախնիները» ընդհանուր առմամբ ճիշտ դիրքերից զրկած հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1985, 1, էջ 195—207), ցավոք, թույլ է աբր-վում մեր վարկածի գնահատման հարցին չհիմնավորված մոտեցում: «Չնայած ուրարտերենից հայերենի և, հավանաբար, հայերենից ուրարտերենի մեջ որոշ թվով փոխառյալ բառերի գո-յությանը, երկու լեզուների քերականական կառուցվածքի, բառապաշարի և լեզվային այլ հատ-կանիշների համեմատումը ակնհայտորեն մատնանշում է նրանց ոչ միայն տարբեր լեզուներ լի-նելը, այլև տարբեր լեզվաընտանիքների պատկանելի, Բավական է հիշատակել էրզատիլի քե-րականական ձևի գոյությունը ուրարտերենում, որն իսպառ բացակայում է հնդեվրոպական լե-զուներում և հայերենում: Այս կապակցությամբ պետք է նշել, որ իր հաստատումը չգտավ նաև ուրարտերենը հնդեվրոպական կամ հնդեվրոպաձև լեզու և կամ հնդեվրոպական լեզուների ազ-գակից լինելու մասին տեսակետը: Դրա փոխարեն նորանոր փաստեր են բերվում խորրերենի հետ ուրարտերենի ունեցած ազգակցական մերձավորության մասին, որով Առաջավոր Ասիայի հնագույն լեզվախմբերից խուրրի-ուրարտական առանձին և ինքնուրույն լեզվախումբը երրորդ տեղն է զբաղում հնդեվրոպականից ու սեմականից հետո: Հեղինակն այստեղ թույլ է տալիս մի քանի վրիպում: Նախ՝ մեր առաջ քաշած հեռավոր ցեղակցության գաղափարը չի հակասում խուրրերենի և ուրարտերենի մերձավոր ցեղակցության գաղափարին: դեռ ավելին: մենք փորձել ենք խուռա-ուրարտական լեզվաընտանիքը լրացնել մի երրորդ անդամով՝ էտեռկիպերենով (հմմտ. «Известия АН СССР, серия литературы и языка», 1976, 2, с. 155—163): Այդ գաղափարն իր արձագանքն է գտել գիտության, այդ թվում՝ ռուսական գիտության մեջ: այսպես, «Древние языки Малой Азии» ժողովածուի (М., 1980, с. 104—105) ներածական հոդ-վածներին մեկում Ի. Մ. Դյակոնովը գրում է. «Դեռևս ռուստրատիկ լեզվաբանության նախա-հայր Հ. Պեդերսենը վարկած է հայտնել հնդեվրոպականի հին տիպին խուրրերենի մերձավորու-թյան մասին (հմմտ., օրինակ, խուռա-ուրարտական էրզատիլի -se-ն համանման «ակտիվ» հոլովի -se/-o-ի հետ, որ վերականգնվում է նախահնդեվրոպերենի համար): խուռա-ուրարտա-կան և հնդեվրոպական կողմնական (կոլատերալ) ցեղակցությունն ընդգծում է իր աշխատու-թյուններում Գ. Բ. Զահուկյանը: Այս պրոբլեմների հետագա ուսումնասիրությունը կարող է ար-տակարգ նշանակություն ունենալ Առաջավոր Ասիայի և Անդրկովկասի էթնիկական նախապատ-մության համար: Ապա «1976 թ. Գ. Բ. Զահուկյանի կողմից (Երևանում) ուշադրություն է դարձվել դեռևս չվերծանված էտեռկիպերենի (Կիպրոսի հնագույն լեզվի) ձևաբանական կաղ-միչների հնարավոր կապին խուռականների հետ: այսպիսով, բացառված չէ, որ էտեռկիպերենը (և ավելի վաղ կիպրո-միդյանները) կարող է մտցվել խուռա-ուրարտական (ալարոդյան) ըն-տանիքի մեջ որպես երրորդ անդամ: ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են: Ընդհանրապես մեզ հայտնի չէ մեր վարկածի որևէ լուրջ քննադատություն ուրարտագետների (Ի. Մ. Դյակոնովի դիտողությունները մասնակի բնույթ են կրում), նոստրատիկ տեսության կողմնակիցների և հնդեվրոպաբանների, կովկասագետների և հայագետների կողմից: Մեզ թույլ էնք տալիս մի քաղվածք էլ բերելու հայտնի քարթվելագետ Գ. Ա. Կլիմովի «Կովկասյան լեզու-ների ներքին ցեղակցության վարկածի մասին» հոդվածից (Вопросы языкознания, 1968, 6, с. 22), որտեղ տրված է մեր վարկածի հետևյալ գնահատականը. «Այսպես կոչված ռուստրա-տիկ» վարկածը... արդեն բերել է միջխմբային հնչյունական համապատասխանությունների բա-նաձևերի որոշ մեթոդություն համեմատաբար մեծ նյութի վրա (տե՛ս Վ. Մ. Իլիչ-Սվիտիլի, Գ. Բ. Զահուկյանի, Ա. Բ. Դոլգոպոլսկու աշխատությունները), դրանով իսկ թույլ տալով առանձին քարթվելիսների ավելի լավատեսորեն նայելու քարթվելական և համեմատյան դեպս հնդեվրոպա-կան լեզուների միջև ծագումնային կապերի հնարավորությանը: Երկրորդ՝ թեև վերևում Ի. Մ. Դյակոնովից բերված քաղվածքը որոշ չափով պարզեց հարցը, բայց կրկին նշենք, որ նախ-հնդեվրոպական շրջանի համար շատ գիտնականներ են վերականգնում էրզատիլ կամ ակտիվ հոլով, և մեր վարկածը հենց հաստատում է այդ գիտնականների կարծիքի ճշտությունը: Եր-րորդ՝ հայերենից ուրարտերենի կատարած փոխառությունների հարցը, ինչպես վերևում նշվել է, առաջին անգամ սկզբունքորեն դրվել է մեր կողմից և հանգամանորեն քննվել մեր արդեն-հիշատակած հոդվածում (Культурное наследие Востока, с. 369):

ված աստվածների և աստվածուհիների անունների մեջ հայկական տարրի առկայության հնարավորության հարցին, որ այս հոգևածում գտնվում է մեր ուշադրության կենտրոնում: Վերևում մենք նշեցինք «(հ)այերի աստված» = Հայկ համապատասխանության հնարավորությունը: Ստորև կանգ կառնենք այլ փաստերի վրա:

2.3.1. Ինչպես հայտնի է, առաջին անգամ գնելով ուրարտերենում հայերեն բառերի առկայության հարցը՝ մենք որպես օրինակ բերել էինք Մենուա թագավորի ձիու Aršibiini անունը, որ ակնհայտ զուգահեռներ ունի հայ. արծուի, արծիւ և վրաց. aršivi «արծիվ» բառերի մեջ: Քանի որ այդ բառը հընդ-եվրոպական ծագում ունի, և քանի որ հայերենը միակ լեզուն է, որտեղ հընդ-եվրոպական *g-ն փոխվում է ծ-ի, ուստի ուրարտերենի և վրացերենի աղբյուրը կարող է լինել միայն հայերենը (սեպագրերի հ-ն հայերենն արտահայտում է սովորաբար ծ-ով և ընդհակառակն): Հայերեն բառն ունի հնդեվրոպական այնպիսի վստահելի զուգահեռներ, ինչպիսիք են հ. հնդկ. ११२५- «ցած սուրացող» (արծվի մասին), ավեստ. ərəzīfya- «արծիվ» բառերը (բերվող մնացած զուգահեռները նույն հավաստիությունը չունեն): Այն պիտի ունեցած լինի *gʷiplo- նախաձևը, որ պիտի տված լինի *արծիւի, ապա, նախաշեշտ ի-ի անկմամբ, V դ. արծուի ձևը. ուրարտական ձևն արտացոլում է հենց հնդեվրոպական ձևի և հայերենի վերականգնվող միջին օղակը: Այս դեպքում դժվար չէ կապը լայնացնել և միևնույն հայկական բաղադրիչը տեսնել ուրարտ. Aršibedini աստծու անվան մեջ, Հարց է առաջանում՝ իսկ ի՞նչ տարր է -di(ni)-ն՝ ուրարտական, թե՞ հայկական. ոչինչ չի խանգարում այդ տարրի մեջ տեսնել հնդեվրոպական ծագման հայերեն դիֆ աստված» բառի եզակի ձևը՝ ուրարտական -ni հոգով հանդերձ: Այն հանգամանքը, որ այդ բառը դասական հայ մատենագրության մեջ հանդիպում է միայն հոգնակի ձևով՝ հեթանոսական աստված նշանակելու համար, կարելի է բացատրել կամ քրիստոնյա հեղինակների կողմից հեթանոսական բազմաստվածությանը քրիստոնեական մենաստվածությունը հակադրելու միտումով, կամ էլ, թերևս, արևելյան կրոնների համար սովորական եղած և քրիստոնեական կրոնին անցած՝ աստվածային երրորդության գաղափարի՝ հայ հեթանոսական կրոնում արտացոլվելու փաստով: Հայերեն դի-ֆ բառը ծագում է հնդեվրոպական¹⁷ *dhēs- արմատի հոգնակի *dhes-es ձևից: Ավելի քիչ հավանական է di-ի մեջ տեսնել հ.-հ. *dei- արմատից ծագող և աստված» նշանակող որևէ ձև, որ հայերենում պիտի ունենար ար- (*աէ) ձևը:

2.3.2. Եթե, այսպիսով, հնարավոր է ուրարտական դիցարանում տեսնել հայկական տարր (մի բան, որ արտացոլում է հայկական ցեղերի խաղացած էական դերը ուրարտական պետության մեջ), ապա, առաջ տանելով խոսքը, մենք կարող ենք հայկական տարր տեսնել նաև մի այլ՝ Šinuḫardi աստվածուհու անվան մեջ. այստեղ ակնհայտորեն առկա է -ardi բաղադրիչը, որ, ինչպես նշվել է, առանձին գործածված է որպես Ardi աստվածուհու անուն և առկա է նաև Šelardi լուսնաստծու անվան մեջ. Գ. Ղափանցյանը այն ենթադրաբար մեկնում է «արև» (Šeiarđi՝ «գիշերվա արև»)¹⁸, Գ. Մելիքիշվիլին՝ որպես «աստղ», «լուսատու» (Šeiarđi՝ «գիշերվա լուսատու»)¹⁹. սակայն մենք հակված ենք այն մեկնելու առժ, իշխանություն. աստված, աստվածուհի» (վերջին դեպքում առանց սեռի տարբերակման) և Ardini տեղանվան ու ardi-še առժ, իշխանություն. հրաման» բառի հետ միասին որպես հեռավոր ցեղակցության ապացույց համեմատելու հնդեվրոպական ar- «հարմարեցնել,

¹⁷ Այսուհետև հնդեվրոպական բառը կտրվի լեզվաբանական գրականության մեջ ընդունված կրճատ հ.-հ. ձևով:

¹⁸ Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, էջ 46:

¹⁹ Г. А. Меллишвили. Урартские клинообразные надписи, с. 417.

կապել, կարգավորել, սարքել» արմատից ծագող հ. պրսկ. arta- «օրենք, իրավունք, սրբազան իրավունք», ալան. арс «աստված», հայ. արդ «ձև, կարգ, սարք», արդար և այլ բառերի հետ (*ar-t-, *r-t- հիմք). այս դեպքում Šelardi-ն պիտի նշանակի «լուսնաստված», եթե Sel-ը հեռավոր ցեղակցութիւն կապենք հուն. σελας «լուսն, փայլ», σεληνյ «լուսին» բառերի հետ²⁰. Մենք նախկինում ենթադրել էինք -ardi «աստված» բառի փոխառութիւնը իրանական աղբյուրից, սակայն *rt > rd փոփոխութիւնը հատուկ է իրանական լեզուներից սկիւթերենին, որի առկալութիւնը մ. թ. ա. VIII դ. ուրարտական մերձավոր վայրերում կասկածելի է: Բոլոր դեպքերում Šinu(1)ar(1) աստվածուհու անվան մեջ առանձնանում է առաջիմ չմեկնված Šinu(1)- բաղադրիչը: Այժմ, երբ մենք ունենք Aršibedini- օրինակը և չենք կաշկանդված հին պատկերացումներով, այդ Šinu(1)-ի մեջ կարող ենք տեսնել հայ. ծին բառի վաղ *ծինո- ձևը, որ ծագում է հ.-ե. *g'en- «ծնել, սերել» արմատի *g'enos- ածանցյալից և միջակա օղակ է երկուսի միջև: Գրաբարում ծին-ը հոլովվում է ի հոլովմամբ, որ պիտի բացատրել այլ բայանունների ազդեցությամբ²¹. ուրարտերենում ավանդված ձևի մեջ պահպանված է նախնական *o-ով հիմքը (որ գրութիւն մեջ արտացոլված է u-ով): Այսպիսով, Šinu(1)-ardl-ն եղած պիտի լինի հին հայկական դիցարանի ծննդի հովանավոր աստվածուհին, որի պաշտամունքը, թերևս, անցել է նաև ուրարտացիներին և տեղական բնույթ չի ունեցել:

2.3.3. Airaini աստծու անունը դեռևս Գ. Ղափանցյանը կապել է հայ. այր «քարայր» բառի հետ և ողջ անունը մեկնաբանել որպես «այրերի աստված»²², սակայն առանց համապատասխան եզրակացութիւններ անելու այդ փաստից: Եթե ճիշտ է Վ. Պիզանիի ստուգաբանութիւնը, ըստ որի այր բառը զուգահեռ ունի հուն. αἰρας նույնիմաստ բառի հետ²³ և հնդեվրոպական ծագում ունի, ապա Airaini դիցանունը նույնպես պատկանել է հայկական հեթանոսական դիցարանին:

2.3.4. Հնարավոր է հայկական հիմք տեսնել նաև Alaptušini աստծու անվան մեջ, եթե նկատի առնենք որ աղաթ-ի բառի համար հնարավոր է վերականգնել հենց *alapt- տիպի մի նախաձև և ուրարտերենի alaptuš-ը դիտել որպես աղաթի հզն. հայցականի սկզբնական արտացոլումը: Աղաթ-f, աղաթեմ բառերը հայ լեզվաբանութիւն մեջ սովորաբար կապվում են աղաչեմ բառի հետ, և հակում կա -ւ-ն համարելու հավելվածային, ինչպես աղաթեմ—աղաւա: Սակայն ուրարտերենի պահպանած ձևը, եթե համեմատութիւնը ճիշտ է, ցույց է տալիս ավելի հավանական նախաձև, ինչպես ծաւաթ—հ. հնդկ. jñapti- «խմացութիւն, տեղեկութիւն, ծանոթութիւն» զուգահեռի դեպքում. աղաթ-f-ը աղաչեմ-ի և ողբ, ողո՛ք բառերի հետ միասին բխեցվում է հ.-ե. *el-/ol բնաձայնական արմատից²⁴, թեև կան հնդեվրոպական ստուգա-

²⁰ Հմմտ. Г. Б. Джаукян. Урартские и индоевропейские языки, с. 36, 39; его же. Взаимоотношения... с. 39, 35.

²¹ Հմմտ. Г. Б. Джаукян. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982, с. 127.

²² Գ. Ղափանցյան. Ուրարտուի պատմութիւնը, էջ 47: Գ. Ղափանցյանի այս մեկնութիւնն ընդունել է նաև Բ. Բ. Պոտրովսկին. հմմտ. Б. Б. Пнотровский. Ванское царство, с. 228.

²³ V. Pisanl.—KZ, 68, էջ 161.

²⁴ J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch. I, Bern—München, 1959, S. 366.

բանության նաև այլ փորձեր²⁵։ Բոլոր դեպքերում բառի բնիկ լինելը գրեթե անկասկած է։

2.3.5. Airaini-ի տիպի կազմութուն է Tarraini դիցանունը, որի Tarr-ը, թերևս, կարելի է համեմատել արդի գրական լեզվում և բարբառներում պահպանված թառ արմատի հետ։ Թեև անկախ գործածությամբ թառ-ն ունի «հավի (թռչունների) թառ» մասնագիտացված իմաստը, բայց թառել նշանակում է «թառել, մի բարձր տեղ նստել», րրբռ. թառ «զառիվեր, բարձր տեղ», թառ տալ «բարձր տեղից կախել. հառել», թառ-թառ «վեր բարձրացած»։ Այսպիսով, Tarraini-ն կարող էր նշանակել «բարձունքների աստված» կամ, թերևս իր բուն իմաստով «թռչունների աստված»։ Թառ-ը որպես բնիկ հնդեվրոպական, սովորաբար կապում են *ters-/tr̥s- «չորացնել» արմատի հետ, որտեղից ծագում են նաև թառամ, թառշամ բառերը։ Հնարավոր է ենթադրել նաև ուրարտերենի ժամանակ հայերեն բառի՝ նույն արմատից ծագող լատիներեն terrā «երկիր» («ցամաք») բառի տիպի մի իմաստ, և դրա ապացույց համարել ուրարտական արձանագրություններից մեկում որպես Meliṣe(i)a-ի (այժմյան Մալաթիայի) երկրի տեղանուն ավանդված Qulbittarrini-ի -tarrini բաղադրիչը՝ Qulbi- բաղադրիչը նույնացնելով Հայաստանում տարածված Կոդը անվան հետ²⁶, բայց այդ ենթադրությունը առայժմ հնարավոր չէ հաստատել որևէ այլ էական փաստարկով, մանավանդ որ Tarra(...) երկրանուն է ավանդված նաև հավանաբար Ուրմիայից հարավ ընկած մի երկրի համար։ Թառ-ի համար ուրարտական շրջանում պիտի ենթադրել a-ով (= *ā, եթե ոչ *a > a) հիմք, որ երևում է թառամ բառի մեջ։ Այսպիսի հիմք կարելի է ենթադրել նաև Airaini-ի այբ հիմքի համար (այլ < *antriā), թեև այն հետո համաբանություն անցել է ի-ով հիմքերին։ Այս դեպքում -ini-ն կամ ուրարտական ածանց է (հմտ. Teiṣebaini քաղաքանունը՝ Teiṣeb-ի դիցանունից), կամ հայերեն -ին ածանցը (հմտ. Վեր-ին), կամ, թերևս, երկուսի բաղադրումը։ Ինչպես հայտնի է, ուրարտերենում բառավերջի ձայնավորները թուլացման (ռեդուկցիայի) են ենթարկվել՝ արտասանվելով ə-ին մոտ։

2.3.6. Ինչպես արդեն նշվել է, վերջերս Գ. Ա. Մելիքիշվիլին Արգիշտի I-ի խորխորյան տարեգրության մեջ փորձել է վերականգնել aštiuzzi բառը՝ վերագրելով նրան «աստված» կամ «կուռք» իմաստը²⁷։ Մինչև այժմ եղած պատկերացումների պայմաններում բնականաբար ենթադրվել է, որ այն ունի ուրարտական ծագում և փոխառվել է հայերենի կողմից աստուած, սեռ. աստուծոյ ձևով։ Սակայն մեր դրույթին համապատասխան այժմ կարելի է անել հակառակ ենթադրությունը և aštiuzzi-ի մեջ տեսնել հայկական ներդրում։ Այս ենթադրությունը նախորդից ավելի հավանական է մասնավորապես հետևյալ նկատառումներով։ Առաջին՝ աստուած բառի համար Ն. Յա. Մառի առաջարկած և Հ. Աճառյանի ընդունած ստուգաբանությունը, ըստ որի այն ծագում է փուլուգական Σαδζαζ (Σαδζαζ) աստծու անունից²⁸, անհավանա-

25 Հմտ. Г. Б. Джаукян. Сравнительная грамматика армянского языка, с. 228. Այս նոր վերականգնման դեպքում (alap-) հնարավոր է, թերևս, աղաթ-ը կապել հնդեվրոպական բնաձայնական մի այլ արմատի հետ՝ *lap- (հմտ. հ. հնդկ. lap- «խոռք ջջնչալ», ուս. лепет «թոթովանք» և այլն)։

26 Սա կարող է բնիկ հնդեվրոպական լինել՝ հ.-հ. *terh₂-/*tr̥h₂-ի, որտեղ հուն. γλῆψο «քարայր», γλῆψος «փոս, դատարկ»։

27 Г. А. Меликишвили. К чтению одного места..., с. 174. Հմտ. նաև G. Melikischwill. Urartu und das südliche Transkaukasien.—Georgica, Jena—Tbilisi, 1980, S. 35—36.

28 Հմտ. Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. 1, Երևան, 1971, էջ 280—281։ Ի միջի այլոց, սա եղել է սովազների ցեղային աստվածը և հետագայում լայն տարածում ստացել։

կան է հնչյունապես. պահպանված ձևերից վերևում բերվածները չեն բացատրում հայերենի ձևը, իսկ մյուս ձևերը (Σαβᾱδός, Σαουζός, Σαζός, Sebadius, Σεβάζιος) շատ ավելի հեռու են: Երկրորդ՝ փոխաբան աստծու պաշտամունքն անցել է ուրարտացիներին (և թերևս հայերին) ոչ թե Astluzi-ի, այլ Šebitu-ի ձևով՝ հավանաբար թրակացիներից, որոնց Σαβαταρας անձնանունը²⁹ թերևս առկա է ուրարտական արձանագրությունների Šebeteria տեղանվան մեջ: Երրորդ՝ աստուած բառի բնիկ հայկական ծագման մասին կարծիքներ են հայտնվել դեռ հնից. դրանք հաճախակի են դարձել հատկապես վերջին տասնամյակներում: Մինչև 1920-ական թթ. կեսերը կատարված ստուգաբանությունների պատմությունը կարելի է գտնել 2. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում»³⁰, հետագա տարիներին՝ 3. Հիլմարսսոնի հոգվածում³¹, որտեղ հեղինակն ինքը աստուած բառը բխցնում է հ.-հ. *sm-stHeu-ag'os նախաձևից (*sm- «համա-», *stHeu- «կանգնեցնել» և *ag'os «ածող, բերող» որպես՝ «համաստեղծարար»): Թեև ստուգաբանությունն եղած փորձերը չի կարելի վերջնական համարել, բայց բոլոր դեպքերում էլ գերադասելի են բուն հայերենով մեկնաբանելու փորձերը. մասնավորապես մեզ հավանական է թվում այդ բառի տու-ի (*տիւ) մեջ տեսնել հ.-հ. *diu- «երկնքի հայր, աստված» արմատը և առաջին մասը կապել հ.-հ. *ansu- հիմքի հետ, որտեղից ծագում են հ. հնդկ. asu-ra-, ավեստ. ahura- «իշխող» բառերը (վերջինիցս ծագում է Ահուրամադդայի անունը, որից հայկական Արամադ-ը): Անհավանական չէ նաև (հ)աստուած թի հաստումն ածող, հաստող, հաստատող մեկնաբանությունը, եթե ենթադրենք հին (հ)աստի- հիմք (համտ. հաստոյր աւթգին) և ած-ը մեկնաբանենք հին «ածող, բերող» իմաստով (համտ. գրաբարյան գրսւծ «գթացող» և ռդռմած «ողորմացող»):

2.3.7. Գրեթե նույնքան ակնհայտ է հայկական տարրը Artu'ar(a)si դիցանվան մեջ, որի Artu-ն ակնհայտորեն պարունակում է հայ. արտ բառի հին *արտո- ձևը՝ ուրարտական գրությունների մեջ օ-ի սովորական u արտացումամբ, այսինքն՝ հ.-հ. *ag'ros > *arto- (>ուրարտ. arto-) >արտ, սեռ. արտոյ: Այս մեկնությունն զեպքում մենք հավանաբար գործ ունենք արտերի և երկրագործության հովանավոր աստծու հետ: Նշանը կարող է լինել կամ երկու ձայնավորի միջև եղած կոկորդային սեղմման նշանակումը կամ հաջորդ տարրի բաղկացուցիչ մասը: Առաջին դեպքում գրության առանձնահատկությունն դիտելով հավելորդային '-ն' մենք կարող ենք առանձնացնել -ar(a)si բաղադրիչը, որ առաջիմ անբացատրելի է մնում և, թերևս, նույնն է Arsimela դիցանվան առաջին բաղադրիչի հետ. քիչ հավանական է սրա -mela-ն նույնացնել հայ. մեղ-բ, սեռ. մեղս-ց բառի վաղ հիմքի հետ: Եթե ուրարտ. s-ն կարող էր արտահայտել նաև հայ ծ-ն կամ ց-ն, ապա կարելի է -arasi-ն ու Arsi-ն տարբերակել և առաջինը համեմատել հայ. արած-ի (համտ. արատ), երկրորդը՝ արծ-ի (համտ. արծաթ, արծե, արծարծել) հ.-հ. *arg- «փայլուն» արմատից՝ կամ բրբռ. արց-ի («հյուսվածք») հետ: Arteni լեռնանվան մեջ կարող է նույնպես պահպանված լինել արա-ի վաղ հիմքը՝ հիմքակազմ օ-ի թուլացմամբ:

2.3.8. Մենք հակված ենք հայկական հողի վրա մեկնաբանելու նաև Z(u)quni դիցանունը, որ կարող է ներկայացնել հայ. ձուկն, հզն. ձկունք բառի սկզբնական *ձուկուն- հիմքային ձևը: Զուկն բառը բնիկ հնդեվրոպական է.

²⁹ D. Detschev. Die thrakischen Sprachreste. Wien, 1957, S. 406.

³⁰ Երևան, 1, 1926, էջ 571—580.

³¹ J. Hilmarsson. Armenian *astuac* „God“.—Annual of Armenian linguistics, 4, 1983, p. 5—15.

ձուկը կարող էր լինել Zi(u)quni երկրի³² և համապատասխան ցեղի տոտեմ-աստվածը:

2.3.9. Հնարավոր է նաև Turani դիցանունը կապել հայ. առաք. ճանապարհի ճանապարհի հիմքի հետ և -an(i)-ի մեջ տեսնել գործող անձի (ներկա դեր-բայի՝ -աղ-ի իմաստով) ածանցի այն հին ձևը, որ թերևս հիմք է տվել -ան-ով մի շարք բայերի կազմության համար³³: Turan(i)-ն կարող էր նշանակել «նվիրող, պարգևող», որ շատ բնորոշ է դիցանունների համար: Այս դեպքում պետք է ենթադրել հիմքային -n- ձայնավորի անկում ա-ից առաջ: Հմմտ. հնդեվրոպական ծագման արմատներից կազմված հին բառերից՝ հնձան «գե-րան» (*հեծնող, նստող), օնջան «սարիչ», առփան «տոփիչ», ոլոռան «տոփիչ», ոլորելու տեղ» (*uloro-՝ հ.-հ. *uel-ից), այլև կռան, շունչան և այլն:

2.4. Կան մի շարք դեպքեր, երբ փոխառության աղբյուրի հարցի լուծումը դժվարանում է:

2.4.1. Araza դիցանունը հավանական զուգահեռ ունի հայկական տոմարի 6-րդ ամսի արաց անվան մեջ, որ Գրիգոր Տաթևացին մեզ անհայտ աղբյուր-ների հիման վրա համարում է Հայկի 7 որդիներից մեկի անունը: Եթե սա իրոք հին հայկական հավատալիքների արձագանքն է, ապա կամ Արաց-ը իր սկզբ-նական Արացա ձևով եղել է բուն հայկական դիցարանի անդամ և արտացոլում պտել ուրարտական արձանագրություններում, կամ եղել է ուրարտական աստ-ված և փոխառվել հայերի կողմից: Այս դեպքում, բնականաբար, ավելի քիչ հավանական պիտի համարել Գ. Ղափանցյանի կարծիքը Araza դիցանվան՝ հայ. արած-(ել) հիմքի հետ ունեցած կապի մասին³⁴:

2.4.2. Arni դիցանունը գրեթե հավասար հավանականությամբ կարելի է մեկնել ինչպես հայերենի, այնպես էլ ուրարտերենի հիման վրա: Առաջին դեպ-քում հմմտ. հայ. առն «արու վայրի ոչխար» և այլ, սեռ. առն, որից առնի «արական անդամ»³⁵: Երկրորդ դեպքում հմմտ. ուրարտ. ar(a)ni «ողորմածու-թյուն, գթություն»:

2.4.3. Եթե Zuzumaru դիցանունը որևէ կապ ունի հայ. բրբռ. ձուկը բառի հետ, ապա վերջինս հավանական փոխառություն է ուրարտերենից, և Zuzumaru-ն պետք է լինի ուրարտական կազմություն. այն կոչվող աստ-վածն էլ պիտի կապված լինի անասնապահական տնտեսության հետ³⁶: Թերևս հնարավոր է նաև ծուծ, -ոյ և *մարո- «մեծ» (հ.-հ. *mē-ro- «մեծ», մարո- < *māro-) մեկնությունը, մանավանդ եթե վերջինս կապ ունի Azame-runi տեղանվան հետ (Azameruni «Մեծ Aza»? Հմմտ. Aza):

2.5. Մնացած դեպքերում կարելի է միայն ենթադրություններ անել՝ ա-ռանց բացահայտելու այլ կարգի մեկնաբանությունների հնարավորությունը: Ահա-վասիկ մի քանի օրինակ:

32 Г. А. Мелюкишвили. Урартские клинообразные надписи, с. 446—447; Н. В. Арутюнян. Топонимика Урарту, с. 81.

33 Տե՛ս Գ. Բ. Джаукян. Сравнительная грамматика армянского языка, с. 186.

34 Գ. Ղափանցյան. Ուրարտուի պատմությունը, էջ 47:

35 Անհավանական է Գ. Ղափանցյանի կարծիքը (տե՛ս Ուրարտունի պատմությունը, էջ 47) Arni-ի «լեռ, բարձրություն» նշանակելու մասին, որ հիմնվում է ուրարտական համահունչ բա-ռերի կասկածելի մեկնության, Անեռ-զազ, Անեռլ ռոն անունների և լեռան բառի կամայական լի-առն մասնատման վրա:

36 Գայթակիչ է Zuzumaru-ն մեկնել որպես հայկական կազմություն՝ *ծծում(ն)արու (հարում, հարկանեմ բայից), որ կտար ձծմ(ն)ար (հմմտ. փռհար > փռհար), բայց հայերենով չի ստուգաբանվում ձծում-ը. բարբառներում ձծմ(ա)հար բառը այլ արժեք ունի՝ «խոցված կա-րագի որոշակի քանակություն»:

2.5.1. Թեև, ինչպես նշել ենք, Aja դիցուհուն Գ. Ղափանցյանը վերագրում է սեմական-բարելական ծագում, բայց հնարավոր է երկու այլ սեկնություն ևս: Մի կողմից՝ այն զուգահեռ ունի հուն. *αἶα* «տատ. մեծ մայր» բառի մեջ և կարող է փոխառություն լինել նաև հնդեվրոպական աշխարհից. հուն. բառը կապվում է լատ. նույնանիշ *avia*-ի հետ և բխեցվում հ.-հ. **auo*- «պապ» հիմքից որպես իգական կազմություն. այս հիմքից է ծագում հայ. հաւ պապ» բառը: Մյուս կողմից՝ այն կարող է կապված լինել հայերի անվան հետ՝ հ-ի բարբառային անկմամբ կամ սեպագրային անտեսմամբ, ինչպես արդեն քննված է Alnaue-ում (հմմտ. նաև *Aladu* երկրանունը). այս դեպքում հայ բառի հետ միասին այն իրոք կարող էր ծագել հ.-հ. **poti*- «տեք» արմատից՝ -*ia* ածանցով և նշանակել «տիրուհի». Հայկ-ի անունը որպես հայերի էպոնիմի կարող է նույնպես ծագել այս հիմքից [հմմտ. Alnaue «(հ)այերի (աստված)», և Aja-ն (*Հայա) կարող էր լինել Հայկի կինը:

2.5.2. Անհնար չէ Elliburi (Ellipuri) դիցանվան մեջ տեսնել հայ. -ւոր (հ.-հ. **bhor*-) ածանցի նախնական ձևը և սկզբի Eli-ն կապել նդ-աւ-իմ բալի եղե- (**bhē*-ւոր «գոյաբեր»?), կամ ել-աւ-եւ-ի ել- հիմքի հետ («ելաբեր» մեկնություն): Սակայն քիչ հավանական է ալդ նույն ածանցը տեսնել Talapura/Talabura դիցանվան մեջ (**թաղաւոր* մեկնություն), որի համար ավելի հավանական է -pura (-bura) բաղադրիչը կապել ուրարտ. pura (bura) «ստրուկ» բառի հետ:

2.5.3. Qilibani աստծու և 'Arubani/Uarubani աստվածուհու անունների մեջ, թերևս, հնարավոր է առանձնացնել -bani տարրը և նույնացնել հայ. բաճ, սեռ. -ի, -ից բառի հետ (հ.-հ. **bhā*- «խոսել» արմատից). թեև վերջինս կարող էր հանդես գալ որպես բարդությունների երկրորդ բաղադրիչ, բայց բավարար համոզություններ հնարավոր չէ մեկնել նշված դիցանունների առաջին բաղադրիչները. դժվար է Qili-ի մեջ տեսնել կեղ «վերք» (սեռ. -ու), կեղ-եյ «տանջել» արմատը (հ.-հ. **guel*-):

2.5.4. Գ. Ղափանցյանի կողմից Adaruta դիցանվան մեջ հայերեն -ոյք-ին զուգահեռ ածանցի առանձնացումը կամայական է, մանավանդ որ -ոյք-ն ունի սկզբնական -ի-ով և ոչ -ա-ով հիմք:

3. Նշած փաստերի համադրությամբ կարելի է հանգել մի շարք էական եզրակացությունների:

3.1. Գիտության զարգացման արդի փուլում կարելի է գրեթե հավաստիորեն խոսել ոչ միայն ուրարտերենից հայերենի, այլև հայերենից ուրարտերենի կատարած փոխառությունների մասին, ցույց տալ հայկական տարր ուրարտական անձնանունների, ցեղանունների և տեղանունների մեջ:

3.1.1. Մեր՝ վերևում նշված Ուրարտական փոխառությունները հայերենում ունեն հոգնություն³⁷ բերված է ուրարտերեն հինգ բառ, որոնց հավանական աղբյուրը հայերենն է. ալդ բառերը հայերենի բառապաշարի բնիկ հնդեվրոպական շերտից են և ունեն միայն հայերենով բացատրվող առանձնահատկություններ:

1) հայ. աւելի, յ-աւելուլ, առաւելուլ (հ.-հ. **obhel*-, որտեղից հուն. *ὄφελος* «ավելացնել, մեծացնել», ընդ որում հայերեն և հունարեն բառերի հավանական աղբյուրն է **bhel*- «փչել, ուռցնել, բխել, առատ լինել» արմատը, որտեղից հայ. բեղուն, բեղմն) — ուրարտ. *abilli-du* «միացնել, ավելացնել» (*abilli* «ավելի» + *du* «անել», այսինքն՝ բառացի «ավելի անել»):

2) հայ. արծուի, արծիւ (հ.-հ. **rg'ipilo*-, որտեղից հ. հնդկ. *ṛjīpya*- «ցած սուրացող» (արծվի մասին), *ավեստ.* *ərəzīfya*- «արծիվ») — ուրարտ. *arsibi*-(*Arsibi-ni* — Մենուա թագավորի ձիու անունը):

3) հայ. ծառ, -ոյ (հ.-հ.

³⁷ Г. Б. Джаукян. Урартские заимствования в армянском языке, с. 369.

*g'ɽso- հմմտ. հուն. կրետ. γάρσα «փալտ, ձեռնափալտ», հ. իսլ. kjarri «թուփ»)—ուրարտ. zari (šari) «ալգի»։ 4) հայ. սուր «սուր. սուր բան, սալը. կտրող գործիք, թուր» (հ.-հ. *k'ō-ro-՝ *k'ē-/k'ō- «սրել» արմատից, որտեղից նաև սայր և սալ «սալ. դարբնի սալ, սուր կռելու սալ»։ *-ɽ-ով ձևեր են նաև վերին գերմ. har «գերանդի սրելու գործիք», մ. ստ. գերմ. haren «սրել»)—ուրարտ. šuri «սուր(?)», ղենք(?)»։ 5) հայ. առաքած «հովիվ» (<*առաք-առած՝ հ.-հ. *dipəro- «տավար. զոհելի անասուն», որտեղից հ. վեր. գերմ. zebur «զոհելի կենդանի», գոթ. tibr «զոհ»+հ.-հ. *træg'-, որտեղից հուն. τρώγω «կրծել, ուտել»)—ուրարտ. tuaraši (Tuarašini տեղանվան մեջ, որ համապատասխանում է հայ. Տուարածատափին)։

Սրանց կարելի է այստեղ ավելացնել նաև մի շարք այլ բառեր, որոնք մեր նախորդ աշխատություններում մասամբ դիտվել են որպես հեռավոր ցեղակցության բառեր։

6) Հայ. անդ «արտ», բրբռ. հանդ «արտ, դաշտ. մի օրվա արածելիք արոտ», հանդավար «հաղ. կալվածք. տուն, տեղ, կողմ», հանդավորեմ «տան ներսի կողմ, բակ», այլև անդեայ, անդի «տավար, նախիր» (հ.-հ. *andh-, որտեղից թուր. ʾānt, ʾ ante «հարթություն», կիմր. enderig «եղ», բրետ. ʾovner «երին»)—ուրարտ. andani «հանդ(?)». գավառ(?)». շրջան(?)» (թերևս «հանդեր» իմաստով, եթե -ani-ն հայ. -ան(ի) հոգնակիտ-հավաքական է, և վերոհիս իրանական ծագում չունի), 7) հայ. արմ(ն), (q)արմ, արմատ «արմատ. ցեղ, զարմ» (հ.-հ. *or-mo-՝ er- «շարժել, հուզել. բարձրացնել» արմատից, որտեղից նաև հայ. որհար)—ուրարտ. arnuzi «ընտանիք(?)», սերունդ(?)» (ավելի ճիշտ է՝ «զարմ, սերունդ». -uzi-ն կամ ուրարտ. ածանց է կամ. թերևս, հայ. -ոց-ը՝ ածանցական հին առումով). 8) հայ. առնեմ «անել. շինել» (հ.-հ. *ar-n-՝ ar- «հարմարեցնել» արմատից)—ուրարտ. arnuše «արարք» (ուրարտերենում այս բայական բուն բայական ձևը չի ավանդված). 9) հայ. անյար «չհարող, անջատ» (ան<հ.-հ. *n- և j+ար<հ.-հ. -ar- «հարմարեցնել»)—ուրարտ. aniar-duni «անկախ». 10) Բամ, բան (հ.-հ. *bā- «խոսել»)—ուրարտ. bause «խոսք. հրաման, իր, բան» (բայական ձևը չի ավանդված). 11) հայ. ծով (հ.-հ. *gʷobh(?) հմմտ. հ. իսլ. kaf «ծով»)—ուրարտ. šue «լիճ». 12) հայ. կամ (հ.-հ. *gʷa «գնալ»)—ուրարտ. ka «կանգնել, երևալ»³⁸. 13) հայ. ցեղ, -ի, -ից (հ.-հ. *skel- «կտրել», որտեղից նաև հայ. ցելով «ճեղքել»)—ուրարտ. zil(i)bi/e «ընտանիք, սերունդ, ցեղ»։ Այս թիվը հավանաբար կավելանա, եթե ճշտվեն ուրարտական մի շարք բառերի իմաստներ, և մեկնաբանվեն անհայտ իմաստով բառերը։

3.1.2. Տպագրության հանձնված մեր «Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան)» աշխատության մեջ փաստեր են բերված ուրարտական հատուկ անունների մեջ հայկական տարրի առկայության մասին։ Որոշ փոփոխություններ ու հավելումներ կատարելով՝ այստեղ կարելի է ներկայացնել որոշ օրվայիններ։

3.1.2.1. Դեռևս Գ. Ղափանցյանը մատնանշել է Erimena անձանվան հնարավոր կապը հայերի արմեն անվան հետ (a-ի բաց e-ով գրություն)³⁹։ Այս գեպում գուցե և իրոք հնարավոր է Menua թագավորի անունը ևս մեկնաբանել հայկական հողի վրա. հմմտ. հայ. մանուկ, մանր, սեռ. մանու, որոնք ծագում են հ.-հ. *menu- հիմքային ձևից։ Թերևս հայերենով կարելի է բացատրել նաև ուրարտ. հետևյալ անձանունները՝ Dada, Dadi (նախորդի հետ

³⁸ Հմմտ. И. М. Дьяко́в. Урартские письма и документы. М.—Л., 1963, с. 89.

³⁹ Թերևս այս անձանունն է, որ հանդիպում է նաև ասորական աղբյուրներում. հմմտ. Древний Восток, 2, Ереван, 1976, с. 87—88.

նո՞ւյնը) — հայ. բրբռ. դադո՛ւ «ո՛վ հայր», դադա՛, դադե՛ «ո՛վ (ավագ) ըույր» (հ.-հ. *dhē-dh(e) կրկնավոր արմատից՝ ընտանիքի ավագ անդամներին նշանակելու համար),¹⁰ Hanu[—]a — հայ. հան(ի), սեռ. =(ւ)ոյ (հ.-հ. *Han- «արական կամ իգական սեռի նախնի»), թերևս նաև Ištagi (արական) — հայ. յստակ, բրբռ. իստակ «մաքուր» (փոխառություն ուրարտերենից՝ ց. կ-ի վաղ բարբառային ձայնեղացում):

3.1.2.2. Անձնանունների և տեղանունների միջև յուրատեսակ միջին դիրք են գրավում ցեղանունները, որոնք հաճախ գործածվում են որպես ցեղերի զբաղեցրած տարածքների (երկրների, գավառների, վայրերի) անուններ. հնարավոր է ուրարտական արձանագրություններում ավանդված հետևյալ ցեղանունների հայկական ծագումը՝ ardarakihi — արդար, Erikuahi [Ir(e)ku(a)hi] — երեկոյ (որպես «արեմուտք». ավելի քիչ հավանական է երկու), gilurani — գե(ւ)ղ, (գիւղ), գեղօրե-ք, Qulla — կող, -ի, -ից (որպես «կողային, լանջային»)¹¹:

3.1.2.3. Ավանդված սակավաթիվ գետանուններից երկուսի համար հնարավոր է հայերեն ստուգաբանություն՝ Alaini — հայ. աղ (ենթադրվում է նաև Ալիս գետի անվան մեջ) և Tura — քոր-ել «հոսել» (հայ. երկու բառերն էլ բնիկ են՝ *sal- «աղ» և *(s)ter — «կեղտոտ հեղուկ»):

Վերևում մենք առիթ ունեցանք խոսելու Qulbitarrini, Tuarašini, Ziuquni տեղանունների հնարավոր հայերեն աղբյուրների մասին: Սրանց ավելացնենք նաև Urme/Arme- երկրանունը, որ կապված է հայ. արմեն-ի հետ (հնդեվրոպական ստուգաբանության համար հմմտ. հուն. ὄρμενος «ցողուն. բողբոջ, ծիւծ», և արտացոլում է հ.-հ. *o> հայ. ո կամ ա անցման երկվությունը: Հանգամանալից հետազոտությունը թողնելով ապագային՝ ալստեղ ալ կարգի տեղանուններից նշենք հետևյալ հնարավոր զուգահեռները՝ Erašele — տեղ(ի) (հին եռղ՝ հ.-հ. *sed- «նստել» արմատից), Hazani — հաց (հ.-հ. *pek- «թխել» արմատից), Irdia (Eridia), Irdaniu, Irdia — երգ «երգիկ, տուն. տնվոր(ներ)» (հ.-հ.?), Karniši (լնոնագավառի անուն) — faw, հգն. ուղղ. fawhif (հյց. fawhina) և այլն: Եթե հայ. տ-ն կարող էր տրվել t-ով, ապա Maqaltuni տեղանվան մեջ կարելի է տեսնել հայ. տուն բառը (հ.-հ. *dom-): Որոշ դեպքերում հայերեն բառերի բնիկ հնդեվրոպական լինելը չի ապացուցված, և դժվար է ասել, հայերենն է արդյոք հետևյալ տեղանունների աղբյուրը, թե՞ դրանց հիմքում ընկած ուրարտերեն բառերը՝ հայերեն բառերինը՝ Širimutara (երկրանուն) — հայ. շիրիմ, Uškianii (լնոնանուն) — ոսկի, Ոսկեան: Հավանաբար Šeriazi գավառանվան մեջ պահպանվել է հայերեն ինչ-որ *սերի բառի հոգնակի սեռականի՝ *սերիաց-ի վաղ ձևը:

3.1.2.4. Ակկադական աղբյուրներում պահպանված՝ Ուրարտունի և նրա շրջակա վայրերին վերաբերող հատուկ անունների մեջ նույնպես կարելի է մատնանշել հայերենով բացատրվող հատուկ անուններ: Իբրև նախնական փորձ նշենք հատկապես կապադովկական հետևյալ անձնանունները¹². Elaniblu. Hana — հան. «տատ», Kukuua — կոկով «մեծախոսություն» (և կոկով «ամորձիք»՝ հ.-հ. *geu- «թեքել, կամարի ձև տալ» արմատից, որից ծագում են կլորածե իրերի և մարմնամասերի շատ անվանումներ) և այլն: Ուրարտուի և մերձակայքի համար նշված աշխարհագրական

¹⁰ Եթե ուրարտ. անձնանունը ուրարտ. բնիկ մանկական-կրկնավոր հիմք չէ:

¹¹ Հստ Գ. Մելիքիշվիլու (Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи, с. 427)՝ «ցեղատոհմային ինչ-որ միավորի անուն»:

¹² Հմմտ. K. K. Riemschneider. Lehrbuch des Akkadischen, S. 280—286.

անուններից նշենք հատկապես Ալալê (քաղաքանուն. հմմտ. Ալա Ղիցունու անունը) — հայ գուգահեռը:

3.2. Ներկա հոդվածում բերված փաստերը ցույց տվեցին, որ ուրարտական արձանագրություններում ավանդված դիցանունների մեջ կարելի է գրտնել հայկական ցեղերի կողմից պաշտվող և մասամբ թերևս ընդհանուր բնութստացած դիցանուններ: Ըստ բերված տվյալների՝ այդպիսիք են Airaini (համտ. հայ. այրայից՝ այր Քարայրը բառից՝ հ.-հ. *anrja-ից. ղուգահեռ ունի հունք. ανρειν Բայր, քարայրը բառի մեջ), Arsimela (համտ. մեղ-ք, մեղաց հ.-հ. *mel- Վերպել, մուրովել. մուրեցնել, խաբել)(?), Aršibedini (համտ. հայ. արծուի, արծիւ հ.-հ. *g'lpiljo- և դի-ք հ.-հ. *dhēs-es), Artu'ar(a)si (համտ. արտ, -ոյ հ.-հ. *ag'ro-), Aštluzi (համտ. հայ. աստուած, սեռ. աստուծոյ), Elipuri (համտ. եղբ- կամ ել- հ.-հ. *el- և -ւոր բերք) հ.-հ. *bhor-), Šinuḫardi (համտ. հայ. ծից հ.-հ. *g'enos- + ուրարտ. ardi), Talapura (համտ. հայ. քաղ-ել և -ւոր բերք) հ.-հ. *bhorā)(?), Tarraini (համտ. հայ. քառ թառելու տեղ. բարձր աեղ) հ.-հ. *tṛs-), Turani (համտ. տուր-ք Բնվեր, պարզեւ) հ.-հ. *dō-ro), Ziuquni (համտ. հայ. ձուկն, հզն. -ուցք):

3.3. Այս արձատների վերլուծությանը կարելի է բացահայտել հայերենում փոխառված ուրարտ. բառեր՝ ձնամ (հմմտ. Zuzumaru), առաց (ամսանուն. հմմտ. Araza):

Տ.4. Հայերենից ուրարտերենի կատարած փոխառությունների քննությունը բացահայտում է որոշակի օրինաչափություններ. ա) ծթե հայերենի պայ-
թականների երեք շարքերին բառակցում օրինաչափորեն համապատասխա-
նում են ուրարտական պայթականների երեք շարքերը՝ բացառությամբ պ-ի,
որ չի տարբերակվում փ-ից (հայ. բ, դ, գ, պ, փ, կ, փ, ք, ֆ—ուրարտ. Բ, Դ, Գ,
Ք, Ժ, Կ (զ), ք, Ժ, Կ), ապա հայերենի կիսաշփականների և շփականների սու-
լական և շլական, խուլ և ձայնեղ տեսակները կարող են արտահայտվել սեպա-
գրությամբ սակավաթիվ նշաններով, այսինքն՝ Ժ, Դ, Գ, Զ, Ը, Զ, Ս, Գ, Զ, Դ, Խ
հնչյունների համար ուրարտական սեպագրություն ունի միայն Ժ, Տ, Տ, Տ
նշանները, և բաշխումը հավասարաչափ չէ. նկատելի է, որ հայ. ծ-ի դիմաց
ուրարտերենն ունի սովորաբար Տ. 2) բառամիջում հայ. բ և լ հնչույթները ոչ
միշտ են տարբերակվում, և լ-ն կարող է տրվել նաև Բ-ով. 3) հայ. հ-ն, ի տար-
բերություն խ-ի, որ տրվում է սովորաբար խ-ով, կարող է սեպագրության մեջ
երբեմն չարտահայտվել. 4) հայերենի ա, ե, ի, ո, ու ձայնավորները և նրան-
ցով կազմված երկբարբառները տրվում են սեպագրության a, e, i, u նշաննե-
րով ու նրանց զուգորդումներով, ընդ որում հայ. ո-ն և ու-ն ընդհանրապես
չեն տարբերակվում, իսկ ե-ն կարող է տրվել նաև i-ով. 5) բառամիջում ձայ-
նավորների տարբերությունները պահպանվում են, բառավերջում սովորաբար
չեզոքանում (բացի ա-ից, որ բառավերջում նույնությունը պահպանվում է).
նշանակում է՝ հայերեն հիմքային միևնույն —ո- ձայնավորը ուրարտերենում
կարող է տրվել բառամիջում և բառավերջում տարբեր ձևով, որ ցույց է տալիս
բառավերջի բաղաձայնի շեշտազուրկ լինելը. հաա Թե ինչո՞ւ *ծիւնո-, աւառո-
ձեւերի դիմաց բառամիջում առկա են Տinu-, Arṣu- ձեւերը, իսկ *սուրո-,
*ծառո- ձեւերի դիմաց՝ šuri(e), zari(e) (šari(e)) ձեւերը. ընդհանրապես հա-
յերեն բառերի հիմքային ձայնավորները ուրարտերենում պահպանված են, այ-
սինքն՝ այս շրջանում հայերենի բառահիմքային ձայնավորները դեռևս չեն ըն-
կել: Aršibi- ձեւի՝ միշին դիրքում Aršibe ձևով տրված լինելը (Aršibedinl)
խոսում է այդ բառի՝ ուրարտերենում իբրև փոխառություն չգիտակցվելու
մասին (եթե -e-ն *-lo-ի արտացոլումը չէ):

3.5. Ուրարտեանի՝ հայերենից փոխառություններ կատարած լինելու փաստը խոսում է հայկական ցեղերի՝ ուրարտական պետության մեջ կատարած մեծ դերի և հայերի ու ուրարտացիների ուժեղ փոխազդեցության մասին, որ հասկանալի է դարձնում մի կողմից՝ հայերի մեջ ուրարտացիների ձուլվելու գործընթացի րավականաչափ արագ ավարավելը, մյուս կողմից՝ սրինուլն երկրի՝ մ. թ. ա. VI դարում թե՛ Urartu, թե՛ Արմինա կոչվելու փաստը:

АРМЯНСКИЙ СЛОЙ В УРАРТСКОМ ПАНТЕОНЕ

Академик АН АрмССР Г. Б. ДЖАУКЯН

Резюме

Исследователи урартского языка неоднократно, но чаще неудачно, пытались этимологизировать некоторые урартские теонимы средствами армянского языка, не делая отсюда общих выводов о взаимоотношении урартского и армянского пантеонов. Высказанная нами еще в 1963 г. идея о возможности заимствования армянских слов в урартский, подкрепленная затем соответствующими примерами (в настоящей статье их число доводится до тринадцати), навела нас на мысль, что переданные в урартских надписях имена божеств отчасти могли быть армянскими, как вклад живших в соседстве с урартами армянских племен, причем эти божества могли частично быть лишь местными, а частично—приобрести более общий характер. На это навел, например, теоним Aršibedini, первая часть которого совпадает с именем коня Менуа Aršibi-ni, явно восходящим к армянскому источнику (ср. др.-арм. arsi<и.-е. *ǵʰr̥p̥l̥o-), а вторая часть находит достаточно надежную интерпретацию в арм. di-k<«бог, божество» (форма мн. ч.)<и.-е. *dh̥s-es, Если прав Г. А. Мелнкшизм, в одной из надписей читавший astiuzi как имя божества или идола, то здесь имеется еще одно свидетельство отражения арм. astuac «бог, божество» в урартском (менее правомерно считать это слово заимствованием из урартского). Можно найти и другие армянские элементы в засвидетельствованных урартскими надписями названиях божеств (общее число которых—больше пяти десятков): Airaini—арм. aṛayin «пещерный» от ауг «пещера» (Г. Капанцян), Aršu-ar(a)si—арм. arš «нива»<и.-е. *agʰro-, Šinulardi—арм. cin «рождение»<и.-е. *gʰenos- (+урарт. ardi «бог»(?), ср. Šelardi «бог луны»), Turani—арм. tur-kʰ «дар, подарок»<и.-е. *d̥b-ro- (*turan «дарящий»). Ziuquni—арм. jukn, мн. ч. jkunʰ «рыба»<и.-е. *gʰh̥lukon и др. Весьма вероятно, что теоним Aṛaza сохранился в древнеармянском названии месяца агас, источником которого один средневековый армянский автор считал имя сына Гайка, легендарного родоначальника армян.